«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի տնօրեն, պատմական
գիտությունների դոկտոր
Ա. Ա. Բոբոխյան

ԿԱՐԾԻՔ

Վահան Վարդանի Ենգիդունյանի «Տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները ՀՀ խոշորացված համայնքներում (սոցիոլոգիական վերլուծություն)» ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության մասին

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի 2025 թվականի օգոստոսի 18-ին կայացած նիստում (արձանագրություն N 8)

Հաշվի առնելով ՀՀ-ում համայնքների խոշորացման հետևանքով ձևավորված տեղական ինքնակառավարման նոր հայեցակարգն ու տարածքային կառավարման գործընթացում որոշումների կայացման առանձնահատկությունների վերլուծությունը՝ այն, որպես ուսումնասիրման ռազմավարական թեմա, կարևորվում է սոցիոլոգիական գիտելիքի համակարգում:

Սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման առանցքային խնդիրներին է անդրադառնում ներկայացված ատենախոսությունը: Ատենախոսական աշխատանքում դիտարկվել են սոցիալական տարածությունների կազմակերպման, պլանավորման ու վերահսկման գործընթացներին սոցիալական տարբեր խմբերի միջև դերաստատուսային հարաբերությունները: Տարածքային կառավարման համատեքստում առանձնացվում են հիմնական պրակտիկաները՝ ի դեմս հողային կոնսոլիդացիայի, տարածքային կոնսոլիդացիայի և համայնքային խոշորացման:

Հետազոտական ծրագրում պահպանվել են պահանջվող բաղադրիչները՝ հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, վարկածները, մեթոդները: Խոշորացված համայնքներում իրականացված փոփոխությունների

նկատմամբ հանրային ընկալումը, ինչպես նաև տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաներին առնչվող խնդիրները հասկանալու համար իրականացված հետազոտությունը պարզաբանում է բնակիչների վերաբերմունքն իրենց բնակավայրին, բնակավայրում տեղի ունեցող փոփոխություններին, բնակավայրի զարգացման ծրագրերին, ինչպես նաև, իրականացվող փոփոխություններից բավարարվածության աստիճանին:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ միաժամանակ ունենք մի քանի նկատառումներ և առաջարկություններ, որոնք հետագայում կնպաստեն աշխատանքի լավարկմանը

- ✓ Համայնքների խոշորացումից հետո փոխվե՞լ են արդյոք մարդկանց մասնակցության ընկալումները համայնքի կառավարման գործում:
- ✓ Կենտրոնից համայնքների տարածական հեռավորությունը մարդկանց մեջ ձևավորո՞ւմ են արդյոք անհավասարության զգացողություն:
- ✓ Համայնքների խոշորոցումից հետո համայնքների միջև կա՞ն արդյոք ներքին հիերարխիաներ, և ի՞նչպես են դրանք դրսևորվում:
- ✓ Նոր վարչական միավորումները փոխո՞ւմ են արդյոք տեղային ինքնության վերաբերյալ մոտեցումները:
- ✓ Խոշորացված համայնքներում՝ հատկապես հեռավոր փոքր բնակավայրերում, արդյո՞ք վտանգ է առաջանում տեղական սովորույթների, տոների, մշակութային հուշարձանների պահպանման համար:
- ✓ Համայնքների խոշորացումը ի՞նչ ազդեցություն է ունեցել փոքր գյուղերից միգրացիոն գործընթացների վրա:

- Աշխատանքում պարբերաբար նշվում են հարցման մասնակիցների՝ իրենց բնակավայրի նկատմամբ տեղի զգացման, տարածական ներգրավվածության, ինչպես նաև տեղի ունեցող փոփոխություններին իրենց մասնակցության՝ սեռով պայմանավորված նշանակալի տարբերությունները. «Իգական սեռի ներկայացուցիչներն ավելի քիչ են հակված մասնակցելու իրենց բնակավայրերում տեղի ունեցող փոփոխություններին և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը՝ մեջբերելով ծանրաբեռնվածությամբ պայմանավորված մասնակցության անհնարինությունը, անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը, ինչպես նաև սույն գործընթացներում ներգրավման սեռային անհամատեղելիությունը, ինչը շեշտադրում է խոշորացված համայնքների բնակավայրերում դեռևս գոյություն ունեցող կարծրատիպային մտածողության դրսևորումները» (էջ 139): Այս համատեքստում առավել արդյունավետ կլիներ կիրառել խորին հարցազրույցի մեթոդը, որը թույլ կտար պարզել համայնքային խոշորացման ազդեցության

վերաբերյալ առկա ընկալումների պատճառականությունը՝ տեղի բնակչության առօրյա կենսափորձի վերհանման միջոցով:

- Չնայած հեղինակին հաջողվել է իրականացնել խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման և պետության կողմից իրականացվող տարածքային կառավարման գործընթացների բազմակողմանի վերլուծություն, սակայն, առավել ամբողջական պատկեր ստանալու համար ցանկալի կլիներ կիրառել նաև փորձագիտական հարցումներ, հատկապես տարածքային կառավարմանն առնչվող իրավական կարգավորումների կիրարկման և դրա սոցիալական արդյունավետության գնահատման համատեքստում:

- Հեղինակի վերլուծության և դրանից բխող եզրահանգումների հիմքի վրա կարելի է ենթադրել, որ որոշ խոշորացված համայնքներ՝ Վայոց Ձոր, Սյունիք և Գեղարքունիք, ըստ տարածական կազմակերպման, վերահսկման և սոցիալ-տարածական պլանավորման ցուցանիշների, առանձնանում են առավել խոցելիությամբ, ինչն զգալիորեն սահմանափակում է դրանց կայունությունը հնարավոր փոփոխությունների դեպքում: Սակայն, այդ առումով, բացակայում են տվյալ համայնքների խոցելիության նվազմանն ուղղված գործնական առաջարկությունները:

- Ատենախոսությունում գերակշռում են բարդ ստորադասական, հաճախ խիստ մասնագիտական հասկացություններով կառուցված նախադասություններ, որոնք դժվարացնում են տեքստի ընկալումը. Օր. «Քանի որ հաշվարկված գործակիցների կիրառություն տեղի ունի յուրաքանչյուր անկախ փոփոխականի կատեգորիաների և կոնկրետ ֆիքսված կատեգորիայի (յուրաքանչյուր փոփոխականի համար այն հանդիսանում է իրենց հնարավոր բարձրագույն մակարդակը) հետ համեմատության համատեքստում, ապա լոգարիթմական գործակիցների էքսպոնենցիալ ձևափոխումից ստացվում են ֆիքսված կատեգորիայի նկատմամբ համեմատական հավանականությունները» (էջ 125): Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ հեղինակին առաջարկվում է հետագա աշխատանքներում խուսափել շարադրման այսօրինակ ոճից՝ բարդ և ծանրաբեռված շարադրանքից, տեքստը կառուցելով հանրամատչելի լեզվով :

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Ստացված արդյունքներն ունեն գիտական. այդ թվում՝ տեսական և կիրառական արժեք, պայմանավորված տարածքային կառավարման նոր սահմանմամբ, տարածական ներգրավվածության գործոնային նոր մոդելով՝ խոշորացված համայնքների առանձնացման հիմքում դիտարկելով սոցիալ-տարածական պլանավորման և տարածական վերահսկման առանձին բաղադրիչներ:

Ատենախոսի հրատարակած գիտական աշխատանքները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն ամփոփում է աշխատանքի հիմնական բովանդակությունը՝ ներառելով հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Եզրակացություն

Վահան Վարդանի Ենգիդունյանի՝ «Տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները ՀՀ խոշորացված համայնքներում (սոցիոլոգիական վերլուծություն)» ԻԲ.00.01 - սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի շատ կարևոր գործնական նշանակություն, և եզրահանգումները կարող են գիտական հիմք հանդիսանալ տարածքային կառավարման նոր խնդիրների բարձրացման և դրանց հնարավոր լուծման ուրվագծման համար:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին Վահան Վարդանի Ենգիդունյանին շնորհել սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «ԻԲ.00.01-«Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
սոցիալական գործընթացների և ինստիտուտների
մարդաբանության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան

25.08.2025